



**Burbank Unified School District**  
Superintendent's Office  
1900 W. Olive Avenue  
Burbank, CA 91506  
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

**Board of Education**  
Steve Frintner, President  
Charlene Tabet, Vice President  
Steve Ferguson, Clerk  
Dr. Emily Weisberg  
Dr. Armond Aghakhanian

**Superintendent**  
Matt Hill, Ed.D.

Փետրվարի 10, 2021

### Նորությունների թողարկում գերատեսչի կողմից.

Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանի հարգելի աշակերտներ, ընտանիքներ և աշխատակիցներ.

Գրեթե մեկ տարի է ինչ մենք ապրում ենք համաճարակի պայմաններում: Մեզանից շատերը հիասթափված են և ուժասպառ, այնուամենայնիվ, ես լավատեսորեն եմ նայում դեպի ապագան: Ներկայումս վարակված անձանց թիվը նվազում է և ավելի շատ պատվաստումներ են կատարվում (բայց դեռ բավական չէ): Ես քաջալերում եմ ձեզ հարգալից կերպ արտահայտել ձեր հիասթափվածությունն ու մտահոգությունները: Մեզանից շատերն անհանգստությամբ են սպասում դպրոց վերադառնալ և շատերիս է մտահոգում աշակերտների և աշխատակիցների առողջությունն ու անվտանգությունը: Մենք պետք է լսենք 2 կողմերին և մտածված ծրագիր մշակել, որը թույլ կտա դպրոց վերադարձնել աշակերտներին: Ցանկանում եմ հիշեցնել, որ Բրբենքի ընտանեկան ծառայությունների գործակալությունը (Burbank Family Service Agency) պատրաստ է աջակցել մեր աշակերտներին զանգահարելով (818) 845-7671 հեռախոսահամարին: Վարակի կառավարման կենտրոնը (CDC) նույնպես ռեսուրսներ է տեղադրել [իր կայքէջում](#):

### Ներկայիս առաջընթացը

- **Անձամբ կրթական աջակցություն.** Մենք ընդլայնում ենք հնարավորությունները հեռակա ուսուցման ընթացքում հաջողությունների հասած աշակերտներին ևս դպրոց վերադարձնել:
- **Մարզական պատրաստվածություն.** Երկուշաբթի օրը, մենք կարողացանք վերսկսել վազորդների մարզական պարապմունքները: Պայմանները բարելավվելու դեպքում, մենք կավելացնենք լրացուցիչ սպորտաձևեր և միջոցառումներ:
- **Տարեվերջյան միջոցառումներ.** Մենք տարեվերջյան միջոցառումներ ենք պլանավորում ելնելով այս ժամանակվա առողջապահական հնարավոր պայմաններից: Ապագա մի քանի շաբաթների ընթացքում, դպրոցների տնօրենները հավելյալ տեղեկություն կուղարկեն:

- **Ամառայի դպրոցի դասընթացներ.** Ներկայումս մենք պլանավորում ենք ունենալ ամառային դպրոցի դասընթացներ: Մենք նախընտրում ենք անձամբ դպրոց հաճախելը, բայց պատրաստում ենք նաև հիբրիդ և հեռակա ուսուցման մոդելներ, եթե առողջապահական պայմանները թույլ չտան ամբողջովին ետ վերադառնալ դպրոց:

## **Ընթացիկ փաստաբանություն**

Դժբախտաբար, դպրոցի աշխատակիցների համար նախատեսված պատվաստանյութի քանակը դեռ ցածր է: Ես և կրթական գրասենյակի անդամները շարունակում ենք պայքարել, որ պատվաստանյութը առաջնահերթություն ունենա դպրոցական շրջանի աշխատակիցների համար: Մենք համագործակցում ենք Բրբենքի քաղաքապետարանի հետ, որպեսզի պատվաստենք մեր բոլոր 1,700 աշխատակիցներին: Մեզ հարկավոր է պատվաստանյութի դոզան: Մենք շարունակում ենք նաև պայքարել, որ Կալիֆոռնիայի նահանգը Կորոնավիրուսի անվճար քննություն անցկացնի շրջանի բոլոր աշխատակիցների և աշակերտների համար: Նահանգը պետք է դաշնային դրամ հատկացնի դրա համար և ոչ թե հոգսը թողնի դպրոցական շրջանի վրա:

## **2021-22 ուսումնական տարվա ծրագրերը**

Ներկայումս մենք պլանավորում ենք 2021-22 ուսումնական տարին սկսել մեր աշակերտների անձամբ դպրոց հաճախելով: Մենք նախընտրում ենք անձամբ դպրոց հաճախելը, բայց պատրաստում ենք նաև հիբրիդ և հեռակա ուսուցման մոդելներ, եթե առողջապահական պայմանները թույլ չտան ամբողջովին ետ վերադառնալ դպրոց: Առողջապահական ներկայիս հրահանգները պահանջում են, որ Լոս Անջելեսի վարակված անձանց տոկոսը 5 հերթական օրերի ընթացքում 25-ից ցածր լինի յուրաքանչյուր 100,000 բնակչի դիմաց տարրկան դպրոցները բացելու համար: Իսկ միջանկյալ և միջնակարգ դպրոցները բացելու համար՝ 7 յուրաքանչյուր 100,000 բնակչի դիմաց: Ներկայումս Լոս Անջելեսի գավառի տոկոսը կազմում է 31.7 յուրաքանչյուր 100,000 բնակչի դիմաց (2/9/21 դրությամբ):

Քանի որ մեզ են սպասում 4 տոնական օրեր, խնդրում ենք վայելել հանգստյան օրերը, բայց հետևել առողջապահական հրահանգներին (կրել դիմակ, պահպանել 6 ոտքաչափ հեռավորություն և սահմանափակել հավաքույթները): Բարի երթ եմ ցանկանում նահանգից դուրս ճանապարհորդություն կատարողներին և հուսով եմ, որ հաճելի ժամանակ կանցկացնեն, բայց ետ վերադառնալով Կալիֆոռնիա, խնդրում ենք [10 օր մեկուսացման մեջ մնալ](#):

Հոգատարությամբ,

Դոկտոր Մաթ Հիլլ  
Գերատեսուչ